

բռնուած եզները, կը գանձէր տուգանքը ու կ'երթար իր հիւղակը, հայհոյելով կեավուրին չհասկցող խելքին: Այսպէս սկսած սա ողբերգութեան լրումը կլլուիլն էր արտին: Ու կրկնեցէք այս իրողութիւնը ամէն օր, գեղին ամէն սահմաններուն վրայ ու հետեւեցէք գեղացիին, որ պարտաւոր է բողոքել, պաշտօնապէս, գազալի գայմագամին, որպէսզի քննիչ յանձնախումբ մը տեղւոյն վրայ քննութիւն մը կատարէ: Դատաւոր, երկրաչափ, քարտուղար, ոստիկան անուններու տակ ճշմարիտ պառականի մը այս քննիչ յանձնախումբը, որ իր տեղեկագիրը կը մատուցանէ՝ հաստատելով խեղճ գաղթականին արդար իրաւունքը, պատառ մը հողի տէր դառնալու, քանի որ վարուած հողին պատմական սեփականատէրը անդին ունի անոր նման տասնով, քսանով ուրիշ արտեր: Այս տեղեկագիրը -աչքովս եմ կարդացեր- կ'արտօնէր բռնագրաւողը վարել հողը, կը դատապարտէր հին սեփականատէրը քննութեան ծախքերու վճարման, որ կը նստէր եզներէն մէկուն հալելուն: Հողին ճամբա՛յ: Ու ասիկա այսպէս տարիով: Չանց կ'ընեմ ոճիրները, սպանութիւնները: Ու կու գամ պատասխանելու ձեր շրթներուն վրայ ուրուացող հարցումին -ինչպէ՞ս կ'ապրէին այդ գեղացիները: Ապրո՛ւստը, պարզ ու վսեմ: Բայց ատիկա բառ մըն է, որ իմաստէ զուրկ է եղած մեր ժողովուրդին մէկ կարեւոր մասին: Սա անասնական պայմանները լայն տարբերակներով, բայց հանգունախորք՝ իշխեր են մեր հայրենիքին բոլոր գեղերուն վրայ: Հայկական հարցին գոյութենէն ալ առաջ: Կէս-փոլիթիքը գերմաններէն առաջ թուրքերունը դարձաւ ԺԹ-րդ դարու կէսէն ասդին: Կը սեղմեմ դիտողութեան ծիրը ու կը մասնաւորեմ այս գիւղակին վրայ: Խօսեցայ մալարիայէն: Հետզհետէ ուռող հարկերը, անպատուհաս սպանութիւնները, հացին թեփով, խաչած խոտով փոխանակուելը բաւական, որպէսզի պատանիները, կենալու տեղ իրենց հօրը կուշտին, գլուխնին առած քաշուէին շրջակօսները, իրենց բա-